Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի ապրիլի 10-ի N 139-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի ապրիլի 15–ից

«1.5% ակնթարթային idcoin» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 15.04.2025թ-ից 30.06.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **QR վճարում՝** «Իդրամ» ՍՊԸ (այսուհետ՝ Իդրամ) սպասարկման ցանցում ֆիզիկական անձանց կողմից Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածը) իրականացված QR վճարում (այդ թվում NFC, QR տեխնոլոգիայով և առցանց կայքերում կատարված QR վճարումները):
1.3 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.4 **Հաճախորդ՝** ցանկացած օգտատեր, ով արշավի շրջանակում Idram&IDBank հավելվածով կիրականացնի 5 և ավել 5,000 ՀՀ դրամը գերազանցող QR վճարում օրացույցային ամսվա ընթացքում:
1.5 **Արշավին մասնակցող գործարք**՝ 5,000 ՀՀ դրամը գերազանցող QR վճարում:
1.6 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի: Մասնակցելով արշավին և ընդունելով idcoin-ները «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդ չհանդիսացող անձինք տալիս են իրենց համաձայնությունը իրենց անձնական տվյալները՝ եկամտահարկի հաշվարկման և վճարման նպատակով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին փոխանցելու համար:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում՝ 15.04.2025թ-ից 30.06.2025թ-ը ներառյալ, Idram&IDBank հավելվածով կատարելով Արշավին մասնակցող գործարքներ Իդրամի սպասարկման ցանցում, Հաճախորդները օրացույցային ամսվա ընթացքում 5-րդ գործարքից սկսած կստանան 1.5% ակնթարթային idcoin:
2.2 1.5% idcoin-ը տրամադրվում է միայն Արշավին մասնակցող գործարքների դիմաց, այսինքն՝ 5,000 ՀՀ դրամը գերազանցող QR վճարումների համար:
2.3 Կատարված գործարքների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր օրացույցային ամսվա համար առանձին: Նախորդ օրացույցային ամսվա ընթացքում կատարված Արշավին մասնակցող գործարքները չեն հաշվարկվում հաջորդ օրացուցային ամսվա դեպքում:

2.4 Մեկ հաճախորդին սույն Արշավի ընթացքում տրամադրվում է հանրագումարային առավելագույնը 5 000 idcoin (հարկումից հետո) օրացուցային ամսվա ընթացքում: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի կողմից:
2.5 QR վճարման դեպքում 1.5% ակնթարթային idcoin-ի ստացման համար հիմք են ընդունվելու բանկային հաշիվներով, կից քարտերով, դրամապանակով, idplus կուտակված բոնուսներով/նվեր քարտերով, idcoin-ով, կոմբո տարբերակով, rocket line/rocket line 0%-ով կատարված վճարումները: Վառելիքի քարտով կատարված QR վճարումները չեն դիտարկվելու սույն արշավի շրջանակում:
2.6 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.7 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված է հետևյալ հղմամբ:
2.8 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: